

սախօսութիւններու իր շարքը տալու համար, որոնք անօրինակ յաջողութեամբ վերջացան։ Չեմ մոռնալու երբէք այն խօսքը, որ վարդապետը խանդավառօրէն ըստաւ, թէ ինչպէս Եւրոպայի ծերունազարդ երաժիշտաներ ուզած են ձեռքը համբուրել յայտնելով, որ “վարդապետ, դուք արեւելեան երաժտութեան համար մեզի նոր բանալիներ չնորհեցիք”¹։

Պարիսում կարդացած դասախօսութիւններից յետոյ, կոմիտաս վարդապետը վերադառնում է Պոլիս։

Բռնկուում է համաշխարհային պատերազմ։ Հեռաւոր ովկիանոսի ափերից մինչեւ Վուփորի գեղածիծաղ ափերը, միջին Եւրոպայից մինչեւ Կովկասեան դռները իրաւունքը տեղի է տալիս թնդանօթին։ Մռացուում է եւ գիր, եւ գրականութիւն եւ գեղարուեստ։ “Քաղաքակիրթ”, Եւրոպայում տաղանդներն եւ հանձնարները լռութեան են զատապարտուում եւ ոմանց բոլորը խեղդուում է հրացանների շաշիւնների մէջ։ Օսմաննեան կայսրութեան մէջ ապրող հայ գրագէտներ, գործիչներ եւ գեղարուեստագէտներ ոչ թէ լռութեան են դատապարտուում, այլ նրանց առաջնորդում են դէպի մահ։

Եւ ահա մեր տարաբախտ երաժշտագիտը, կոմիտաս վարդապետ, 1915 տագէտը, կոմիտաս վարդապետ, 1915 թուի ապրիլ 11-ին Պոլսոյ մոաւորական-ների հետ աքսորուում է Ասիայի խորերը։ Զգայուն երաժիշտի հոգու վրայ այս պատասխանները ոչ թէ լռութեան են դատապարտուում։

Կոմիտաս վարդապետը կարողանում է միջնորդութեամբ Պոլիս վերադառնալ։ Այդ ժամանակաշրջանում նա գտնուում է նիւթական աննախանձերի պայմաններում։

Մի կողմից անխոնջ ու յամառ աշխատանքը, աքսորի կրած վախն ու սպասափր եւ միւս կողմից աննկարազրելի պատ-

կերներ ու ջարդեր անդրադառնում են կոմիտաս վարդապետի հոգեկան աշխարհի վրայ եւ նա մի դժբախտ օր դառնում է խելագար։

Շուտով հնարաւոր է լինում հիւանդը բժշկել։ Սակայն ապաքինումը ժամանակաւոր արժէք է ունենում միայն։ Երկրորդ հիւանդութիւնը լինում է ծանր եւ անբուժելի։ Զինադադարից անմիջապէս յետոյ, կոմիտաս վարդապետին փոխադրում են Պարիս, ուր մինչեւ այսօր մեծանուն արուեստագէտը, մենակ, անմիսիթար, կեանքի դառնութիւնները ծաշակած, ապրում է իր կեանքի վերջալցուը։

(Ը-բ-բ-ն-է-լ-է-)

Դ. ԹէրէլէՄէջնեան



ՍԱՑԵՆԱԽՈՍԱԿԱՆ

ՄԱՑԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1923 ՏԱՐԻ 03

1. Լեզու եւ Մատենագրութիւն։

Տաճիկ բառի ծագումը։ Թէսդիկ, ԺԷ. 1923, 354—356, Կամփութ այս հարցի մասին յայտնուած կարծիքները։ Լ. Մեսրոպի (Ճակատամարտ 1921, Հոկտ. 25), Գ. էրոբ Մեսրոպի (1921, Գեկտ. 16), Մարկոսարտի (1922, Փետր. 8), Տէրոյենցի (Երեւակ 1861, Յուն. 16)։

Meillet A.: A propos de Կարդէ։ Rev. Et. Arm. II, 2, 1923, 238—234. Սցն գաղափարը բացարող երեք իրանական բառաձեւերեւն մին է հայ Կարդէ։ որ պարթեւական ճեւն եղած ըլլալու է։

Մերուպեան Սահակ “Հայ-Երևանական Ուսումնական սրբութիւնքն Յ. Թիրեաքեանի (գրախօսական), Պայքար. Ա., 1923, Թիր. 88, 89, 90, 91։ Հ. Ա. Տիրական, Իջ. Պ., 1923, 147—150։

Աբեղեան Ա. Բոգոֆ. Մառ եւ Հայերէնի ծագման ինդիքը, Յուսաքեր (Նոր Շ., Թ. տարի) 1923, թիր. 14, 15։

¹ Հրաչ, “Հայաստանի օրաթերթ, 1917 թ.,

Վարդանեան Հ. Ա.' Բառաքննական դիսոլութիւններ. Դասական շրջան: Դ. Ազգ. Մատ. Ճ' Աբեննա 1923, 8^o, էջը 130:

Ակինեան Հ. Հ.' Քանի՞ տեսակ թուական ծանօթեր Հայոց: 1. Թէսողիկ, Ամէնուն տարեցոյցը, Ժի, 1923, 51—57: — Ութը աեսակ կը թուէ 1. Ամարաբութեան: — 2. Աշխարհի՝ և ըստ Անդրեասյայ. բ. ըստ Եւս. Կեսարացւոյ կամ Եօֆանասնից թարգմանութեան, բ. ըստ Ս. Ասողկան: — 3. Հուռամոնց կամ Յունաց թուական: — 4. Քրիստոսի թուական. ա. Ծոնդեան. բ. Յետ խաչելութեան Ք. ի. է. Լուսաւորչի (301): — 5. Հայոց թուական. ա. Բուն տօմար Հայոց (551/2). բ. Արեգաւագի կամ նոր շրջանի (1084): է. Ազարիայի կամ փոքր թուական Հայոց (1616): — 6. Խնդիւտին: — 7. Ողոմնիսիադ: — 8. Հիճրէ: — Արտապ. Յովակիմեան, տպ. Կ. Պոլիս 1922, 8^o, էջ 8:

Ubaldo Faldati: S. Ireneo, Espositione della predicazione apostolica. Իշարս Scrittori cristiani antichi, N. 6. Roma 1923, էջ 170.

Ա. Երկու հնագիր պատառիկներ. Բ. Զ. Ս. 2, 1923, 33—34: Մին Ա էնետկեան ձեռագրէ, պատմական բովանդակութեամբ, Փուլը Յիշտառակարան (ՌՃՒԷ) Հալեպի մէկ Սաղմոսագրքին (Թիկլ):

Ակինեան Հ. Ն.' Միջնադարեան բանաստեղծ խաչառու Խասպէկ Երկց կաֆայի. Դիցաւան (Պատուրեանի) 1923, Ա, 138—142:

— Մատենագրական հետազոտութիւններ, Վիեննա 1922: Գրիս. Ս. Յ. Արեգ, Բ, 1923, 254—255.

Macler Fr.: Notices des Manuscrits Arméniens ou relatifs aux Arméniens vus dans quelques Bibliothèques de la Péninsule Ibérique et du Sud-Est de la France. — Rev. Et. Arm. II, 2, 1922, 284—291 (Ղեղ): Մարտէլ' Ս. Միրզայշեանց ունի Երկու նորադոյն Զ. հոգեւոր պարունակութեամբ, պատկերազարդ, յիշտառակարաններով առաս: Մանրամասն նկարագրութիւն, էջ 234—255: — Carpentras, Քաղաքային Մատենադարան.

22 Թիւ 1798 (Ժի դար), 1816 (Ժ. Զ. Զ.): 1818 (Ժի) Հայկական նիւթեր լատիներէն լեզուաւ (էջ 250—269): — Avignon, Քաղաքային Մատենադարան, Զ, Թիւ 289, Թ. 1—2 (Հուս. լուսատիպ), լատիներէն լեզուաւ սիոսք վասն արեւելեան մալորութեանց (էջ 269—276): — Avignon, Archives Départementales. Jean Althen Հայոց մասին յիշտառակութիւններ, էջ 276—282: — Lyon, Քաղաքային Մատենադարան, Երեք հայերէն թագին պատմահամար (էջ 282—285): — Ուսումնասիրութեան ընթացքին պատմահամար (էջ 286—291):

Գրիգորեան Ա.' Հայկական հին ձեռագիրներ Աննա Բիբիսանական թանգարանում: Բ. Զ. Ս. 2, 1923, 5—7, 66—69, 101—104, 135—138:

Թորգոմեան Ա.' Հայ բժշկական ձեռագիրը Ս. Պատրու վաճարին: Բ. Զ. Ս. 2, 1923, 7—11, 39—43, 69—71, 104—107, 138—142: Ա. Գաղիկ Հեթումեան բժշկարան, Բ, Գրիգորի Նիւսացւոյ Յաղագս թնութեան մարդոյն:

Tchobanian A.: La roseraie d'Arménie, II. tome, Paris 1923, XXI+341: — Գրիս. Ս. Արեգ,

Բ. 1923, 190—191: — Ապագայ, 7, 1923, Թիւ 20, Թթվա: Journal des Débats: — Հայաստանի Զայն, Ա, 1923, Թիւ 41: — Պայքար, Ա, 1923, Թիւ 116: — Նոր Օր, Բ. 1923, Թիւ 53. Թթվա: Eclair: — Ե. Մ. Պայքար, Ա, 1923, Թիւ 102, 103: — Ա. Զապանեան, Վարդենիք Հայաստանեայց (Ներածութեան) Կոչնակ, ԻԳ, 1923, էջ 517—519, 552—553, 588—689, 628—629:

Ե. Մ.' Կերսէս Ծնորհալի. Պայքար, Ա, 1923, Թիւ 104: Քաղուած Զապանեանի “Ապագենիք” էն:

Չոպանեան Ա.' Կոստանդինի Երգնկացի, Պայքար, Ա, 1923, Թիւ 105, 106, 107: Կը թարգմանէ իւր “Ապագենիք” էն Կ. ի նուիրուած ուսումնասիրութիւնը:

Ե. Մ.' Խաչատուր Կեչարեցի եւ Գրիկ: Պայքար, Ա, 1923, Թիւ 108:

Ա. Չոպանեան' Գրիկ: Կոչնակ, ԻԳ, 1923, 19—21, 42—44, 104—108, 136—138: — Գրիգոր Խալթյի, Զար, Գնունցի, եւ Յավասար Սերաստացի, Պայքար, Ա, 1923, Թիւ 109: — Յովհ. Թղկուբանցի եւ Սիմեոն Ապարանցի. Անդ, 110: — Յահապետ Քոչչակ, Անդ, 111: — Անանուն բանաստեղծութիւնը. Անդ, 114:

Բասմաջեան Կ. Յ.' Նորին Գրկանն ասացեալ վասն Արզուն Ղանին եւ Բուղայի: Կոչնակ, ԻԳ, 1923, 264—265:

Երեմեան Ա.' Սոյիհալական մօտիւներ Միջնադարեան հայ քնարերգութեան եւ աշուշական գրականութեան մէջ: Արեգ, Բ, 1923, 115—124: I. Գրիկ (1230—1310): II. Մկրտիչ Կալաշ: III. Աշուշապետ Քոչչակ, Անդ, 111: IV. Տէր Կարապետ:

Seth M. J.: Madras The Birth Place of Armenian Journalism. The New Empire, Calcutta 1923, May 14. — Յար. Ծմաւնեան, հիմնադիր Ազգարարի, առաջին հայ լրագրին, 1794ին: Հմաննաւ ՀԱ. 1923, էջ 237—241. “Տէր Յարութիւն Ծմաւնեան, հիմնադիր հայ հրապարակագրութեան:”

Նշանեան Ա.' Վ. Վ. Պ.՝ Գրիգոր եպ. Ծղթայակիր. Թէսողիկ, Ժի, 1923, 385—387: Անտիպ նամակ Գ. Պ. Ծղթայակիրէ, ուղղուած Կ. Պոտոյ սեղանաւորներուն եւ հացագործներուն, էջ 387—389: Պաշալեան Ա.' Le cinquantenaire de la Mort du poète Arménien Bédros Tourian. Rev. Et. Arm. II, 2, 1922, 327—330:

Չոպանեան' Bédros Tourian. Sa vie, son oeuvre. Անդ, էջ 330—337, 337—341 Երեքերէն նմայներ Զապանեանի Փրանս. թարգմանութեասը:

Ե. Մ.' Լեզու գրականութիւն, ցեղային գյութիւն: Պայքար, Ա, 1923, Թիւ 1, 2, 4, 5, 6: Երեմեան Ա.' Հաշարմահալի հայ ժողովութական բանահիւսութիւնը: Ազգ. Մատ. Պ. Զ., Վիեննա, Ս. Պ. 1923, 8^o, էջ + 81:

Զգոն' Գանիկէ Վարուժան (կենսագրական գիծեր): Նոր շարժում, Ա, 1923, 112—115:

Յահութեան Ա.' Ռուբեն Զարգարեան (գաւառական վեպ): Արեգ, Բ, 1923, 104—108, 224—230, 301—304, 361—363:

Մամուրեան Ա.' Գեղմի մը անհետացումը: Գրիգոր Զիննիկիրեան (1837—1923): Պայքար, Ա, 1933,

Թիւ 57: Զգոն, Արեւ, 1923, Թիւ 76, 77. Ճակատամարտ, Ժ.Գ., 1923, Թիւ 1319. — Նոր օր, Բ., 1923, Թիւ 34:

Զգոն՝ Յովհ. Թումանեան, Արեւ, Թ., 1923, Թիւ 102—193:

— Ա. Յակոբեան, Յ. Թումանեան (ընդհանուր ակնարկ) Արեւ, Բ., 1923, 129—133, 215—223, 357—360, 412—416:

Նազարեան Տ.՝ Յովհաննէս Թումանեան: Արմէնիա, Լ.Ը, 1923, Թիւ 37, 38:

Աչառունեան Պ.՝ Յովհ. Թումանեան: Հայաստանի Զայն, Ա., 1923, Թիւ 37, 47:

Հ. Շեմա՝ Յ. Թումանեան, Ճակատամարտ, Ժ.Գ., 1923, 1339:

Չպանեան՝ Յովհաննէս Թումանեան: Ապագայ, Գ., 1923, Թիւ 19. Գ. Խփէկեան, Արեւ, Թ., 1923, Թիւ 99, 122, 123: — Արեղեան Արտ.: Հայրենիք, Խ.Գ., 1923, Թիւ 3345—3350:

Մակինցեան՝ Բանաստեղծ Յ. Թումանեանի մահը: Ժողովուրդի Զայնը, Ե., 1923, Թիւ 13, 71: — Պայքար, Ա., 1923, Թիւ 100: — Գ. Մ., Յ. Թումանեան, Հայաստան, Ե., 1923, Թիւ 344—5: — Ռէն, Յուսուրեր, Թ., 1923, Թիւ 18, 19, 20, 22, 23: — Միկիթարեան Գ., Նոր շարժում, Ա., 1923, Էջ 153—156, 173—176, 188—190, 204—207, 223—225, 242—245:

Մակինցեան Պ.՝ Վահան Տէրեանի մահն ու մահէրը: Նորք, Թիւ 1, 1922, Էջ 97—102: Ինչպէս է ծագել Ռուսիացի Շոթարի “Ծննդենաւորնի թարգմանութեան միտքը Վահան Տէրեանի մէջ”: Անդ, 114—116: Իսկ թարգմանութիւնը՝ Էջ 117—119: — Մառ (Ժրդմ. Քալանթար): ԻՄ Ռւսանուղ Վ. Տէրեանի յիշառակին (“Ծննդենաւորնի թարգմանութեան առիթով”): Անդ, 120—126: Երեմեան Ա.՝ Եղիշէ Զարնց եւ իր բանաստեղծութիւնները: Արեւ, Բ., 1923, Էջ 57—61:

Չարենց Եղիշէ՝ “Երկերի Ժողովածուն” Ա. 380, Բ. 280 Պետական հրատարակութիւն: Մոսկով 1922, — Գրխո, Մակինցեան Պ., Նորք, 1922, Թիւ 1, Էջ 287—299:

Ա. Վաղինակ՝ Երուանդ Մեսիաեան, Գ. Րազէւոր հրատարակիրը եւ հասարակական մարդը (իր նոր հրատարակութեանց առիթիւ): Նոր օր, Բ., 1923, Թիւ 24, 30:

Վաշէ Հայկ՝ Գրական Տարին 1922ին (Արագ նշարներ): Նոր օր, Բ., 1923, Թիւ 1:

Միսաք Մեծարենց՝ Անտիկ էջեր՝ Մեծարենցէն: Թէսդիկ, Ժ.Ը, 1923, 78—83:

Հօսնու Աստատը, Խաչատուր Միսաքեան Բարիկի Աջ, 1848—1872: Թէսդիկ, Ժ.Ը, 1923, 108—120:

Հ. Ա. Կողնեան

14



ԱՅԼԵԿԱՅԻՔ

1. -ծորմ մասնիկը Սեբաստիոյ զաւարաբարբարին մէջ: — Քրոնիկոնի Ա. Էջ 68 սեւ զիկս պարսպացն ի նիւթօնուն աղիւսոյ եւ ի նամեթէ շնէր, հատուածի ընդգծուած բառը որքան ալ մեր մատենագրութեան մէջ մէկ անգամ միայն գործածուած է, կը խորհիմ թէ գյուղիւն ունեցող բառ մըն է, եւ ենթագրութիւններու վրայ հիմուելով՝ կասկածաւոր, “անիմաստ”¹ հոչակել անտեղի կը համարիմ եւ մեղանչում մը նախնեաց մատենագրութեան դէմ:

Սեբաստիոյ բարբառին մէջ այդ կազմութեամբ ունինք բաւական թուով բառեր, այսպէս:

Կտործուն = Կտորածոյ = Կտորներով շնուռած (առարկայ), կտորներէ կտրուած (զգեստ):

Ոլլըծուն = ոլբածոյ, լաւ ոլորուած (գերձան):

Հուսծուն = հիւսուածոյ. հիւսեալ, (որման քարով աղիւսով հիւսուած, շարուած). արծաթ կամ ոսկի թելերով հիւսածոյ (զարդեղէն, ապարանջան):

Ժմակիծուն (Ժափել = ձուլել) = ձուածուած:

Հինծուն = շինուածոյ, շինեալ կերտեալ:

Ալլըծուն-ժողլըծուն = աւլուած, ժողլուած, մաքուր, կոկիկ տուն:

Փործուն = փորուածոյ, պեղեալ:

Պլըծուն = պլորածոյ, պլորուած, պարուեալ:

Դարձեալ սա առածածեւ ասացուածին մէջ:

“Խելք կայ ուսծուն, Խելք կայ՝ բուսծուն”:

Ուսծուն՝ ուսածոյ, ուսեալ, արուեստական:

Բուսծուն՝ բուսածոյ, բնածին (խելք, հանձար): Արդ Քրոնիկոնի թարգմանչին գրչին հակած սա նիւթօնուն բառը ինչո՞ւ չի նշանակեր, նիւթածոյ, նիւթեղինեալ, պատրաստուած (աղիւս):

¹ Հանդ. Ամսորեայ 1922, Էջ 652, “Բառաբնական բառ Գիտողութիւններու Հ. Ա. Վարդանեանի”: